



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԱԿՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



Վարդանանցի Տոնակատարութիւն
Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի
Կիրակնօրեայ Վարժարաններու Աշակերտութեան

Եթէ որոշած ենք, իբրեւ անհատներ ու հաւաքականութիւն, հայ ապրիլ եւ գոյատեւել, պարտականութիւնն ու պարտաւորութիւնը ունինք մեր մասնակցութիւնը բերելու մեր ազգային միութիւններուն եւ կազմակերպութիւններուն, ըլլան անոնք մարզական, մշակութային, հայրենակցական, կրօնական թէ քաղաքական, որովհետեւ անոնցմէ իւրաքանչիւրը իր դրական ազդեցութիւնն ու դերը ունի հայապահպանումի եւ հայեցի դաստիարակութեան:

Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Ազգային Առաջնորդարանի հովանիին տակ գործող Կիրակնօրեայ Վարժարանները կը հանդիսանան այդ գլխաւոր կազմակերպութիւններէն մէկը, ուր հայ մանուկին ու պատանիին կը տրուին քրիստոնէական դաստիարակութիւն մեր Եկեղեցւոյ եւ Հայոց պատմութեան մասին հիմնական գիտելիքներ:

Ազգային տօներէն՝ Վարդանանցի տօնակատարութիւնն ու յարգանքը, ինչպէս նաեւ հայու հաւատքի արժեւորումն ու անոր փոխանցումը արժանի ձեւով նոր սերունդին կատարելու համար, Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Ազգային Առաջնորդարանի Կիրակնօրեայ Վարժարաններու Կեդրոնական Վարչութիւնը գեղեցիկ գաղափարը յղացած էր, Կիրակի 11 Փետրուար 2007-ին, բոլոր կիրակնօրեայ վարժարաններու աշակերտները մէկտեղելու Ս. Աստուածածին Եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահը եւ յատուկ յայտագիրով մը նշելու գայն:

Տօնակատարութիւնը կը վայելէր Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի հովանաւորութիւնը: Ներկայ էին Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչները՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան եւ Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիմեան, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տէր Վազգէն քիւյ. Աթմաճեան, Տէր Արտակ քիւյ. Տէմիրճեան, Եկեղեցիներու հոգաբարձուներ եւ ծանօթ բանաստեղծ Ժագ Յակոբեան:

Հայր Միւռն, ներկաներուն հետ արտասանելով Տէրունական աղօթքը, կատարեց յայտագրի պաշտօնական բացումը: Ներկաները ապա միասնաբար արտասանեցին Մաթ. 10:28-ի «Մի՛ վախնաք անոնցմէ, որոնք մարմինը կը սպաննեն եւ սակայն հոգին չեն կրնար սպաննել» ոսկեղէն համարը եւ խմբերգեցին «Իմ հայրենեաց հոգի Վարդան»ը:

Հայր Սուրբը, խօսքը ուղղելով ներկաներուն, ըսաւ, որ Վարդանանց հերոսները մեռան գիտակցաբար, անոնք իրենց կեանքը զոհեցին հայրենիքի համար, հաւատքի համար, Յիսուսի համար, որպէսզի մենք այսօր հայ մնանք, ապա շնորհաւորեց բոլոր ծնողները, աշակերտներն ու ուսուցիչները, որոնք մեծ զոհողութիւններով պատրաստած էին յայտագիրը: Շարունակելով իր խօսքը, հայր սուրբը ըսաւ, որ Վարդանանց հերոսները մօտաւորապէս 1500 տարի առաջ, ամբողջ հայ ժողովուրդին հետ միասնաբար ոտքի կանգնելով, «ո՛չ» ըսին Յազկերտին: Այսօր, մենք, ամէ՛ն օր Վարդանանք կը տօնենք, այսօր, ամէ՛ն օր, նոր Յազկերտներ կը փորձեն մեր հաւատքը մեզմէ խլել: Զրիստոնէութիւնը դուրսէն բերուած բան մը չէ մեզի համար, այլ ան մեր մորթն է, մեր մարմինն է, մեր երակներուն մէջէն հոսող արիւնն է, հետեւաբար ոչ ոք կրնայ զայն մեր մէջէն հանել:

Եզրափակելով իր խօսքը, հայր սուրբը աշակերտներուն թելադրեց, որ ամուռ մնան իրենց հաւատքին մէջ, որ օր մը իրենք Վարդանի սուրը բարձրացուցած, երթան յաղթանակէ յաղթանակ:

Հայր սուրբի խօսքէն ետք, բեմ բարձրացան Ս. Աստուածածին եկեղեցւոյ Կիրակնօրեայ Վարժարանի աշակերտները, որոնք կատարեցին «Քաջն Վարդա» եւ «Վարդանանց Տօն» խմբային արտասանութիւնները:

Փասատիւնայի Ս. Սարգիս եկեղեցւոյ Կիրակնօրեայ Վարժարանի աշակերտները իրենց մասնակցութիւնը բերին խմբերգով եւ տրամախօսութեամբ, իսկ Մոնթեպելոյի Ս. Խաչ Մայր Տաճարի Կիրակնօրեայ Վարժարանի աշակերտները կատարեցին «Հայ Եմ Ես» եւ «Անունս Է Քաջն Վարդան» խմբային արտասանութիւնները, որմէ ետք խմբերգեցին «Քաջն Վարդան Մամիկոնեան»ը:

Սան Ֆերնանտօ Հովիտի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Կիրակնօրեայ վարժարանի աշակերտները, «Վարդան Մեր Քաջ Չօրավար» խմբերգը կատարելէ ետք, ներկայացուցին Վարդանանցի յատուկ տրամախօսութիւն մը:

Հովիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ Կիրակնօրեայ Վարժարանի աշակերտները, ղեկավարութեամբ եւ երգեհոնի ընկերակցութեամբ Պրն. Բաֆֆի Թորոսեանի, կատարեցին «Մեծ Պայքարի» եւ ժագ Յակոբեանի «Աստուծոյ Չաւակներ» խմբերգերը եւ «Վարդանանք» արտասանութիւնը:

Յայտագիրի աշակերտական բաժինը վերջ գտաւ «Հիմի Էլ Լռենք Եղբարք» խմբերգի կատարողութեամբ, որուն մասնակցեցան աշակերտներն ու ներկայ հանդիսատեսները:

Նախքան հանդիսութեան ավարտը, Հայր Միւռոն բեմ հրաւիրեց Սրբազայն Հայրը, որ իր պատգամը փոխանցէ: Սրբազանը եկաւ դրոշմելու, թէ դարեր անցած են Վարդանանցէն ետք եւ ահա այսօր, այս սրահին մէջ կը զգանք, որ «Վարդանը քաջ, Վարդանը սուրբ, կ'երթայ մի՛շտ առաջ»: Դարեր անցած են եւ այսօր համախմբուելով այստեղ, կը վերանորոգենք մեր հաւատքը, հաւատարիմ մնալով Վարդանանց եւ Ղեւոնդեանց ուխտին:

Ապա Սրբազանը շնորհաւորեց աշակերտները, որոնք իսկապէս կրցած էին հասկնալ եւ փոխանցել Վարդանանց ոգին, ապա աշակերտներէն խնդրեց, որ իրենց շնորհակալութիւնն ու երախտագիտութիւնը յայտնեն իրենց ուսուցիչներուն, որոնք սիրայօժար եւ կամաւոր կերպով կը տանին այս աշխատանքը, աշխատանք մը՝ որ հիմնուած է հաւատքի վրայ, լոյսի եւ սիրոյ վրայ:

Եզրափակելով իր խօսքը, Առաջնորդ Սրբազանը աշակերտներուն թելադրեց սիրել եկեղեցին իբրեւ իրենց մայրը, եւ Աւետարանը իբրեւ իրենց հայրը:

Վերջապես Սրբազանը բացատրեց յանձնառություն բառին իմաստը, որ պատասխանատուություն մը սիրով ստանձնելու եւ կատարելու պարտականությունն է, եւ օրինակ տալով ըսաւ, թէ մեր Թեմէն ներս կան բազմաթիւ կրօնականներ, ուսուցիչներ եւ անձեր, որոնք յանձնառու են իրենց պարտականություններուն եւ պարտաւորություններուն, յատուկ շնորհակալութիւն յայտնեց հայր Միւռնին եւ հայր Պարթեւին, որոնք մղիչ ուժն են այս աշխատանքին:

Կիրակնօրեայ Վարժարանի Կեդրոնական Վարիչ Մարմինը, իր կարգին, իր երախտագիտութիւնն ու շնորհակալութիւնը յայտնեց Հայր Միւռնին, Հայր Պարթեւին եւ Կիրակնօրեայի տեսուչներուն՝ Տեարք Յակոբ Ջաղացպանեանի, Վարդան Կեպէնեանի, Րաֆֆի Թորոսեանին եւ Տիկնայք Սեդա Բէչեճեանի եւ Թալին Չօմճեանի ու զանոնք պատուեց յուշանուէրներով: Նուէրները յանձնեց Առաջնորդ Սրբազանը:

Կիրակնօրեայի քայլերգով վերջ գտաւ հանդիսութիւնը. ապա ներկաները հիւրասիրուեցան սուրճով եւ խմորեղէնով:

WESTERN PRELACY SUNDAY SCHOOL STUDENTS CELEBRATE VARTANANTS

On the afternoon of Sunday, February 11th, 2007, Sunday School students from all Prelacy churches gathered at “Armenak Der Bedrossian” Hall of St. Mary’s Church in Glendale to celebrate Vartanants. The gathering was held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. In addition to the Prelate, Christian Education Department Directors Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian were in attendance, along with St. Mary’s Church pastors Rev. Vazken Atmajian and Rev. Ardag Demirjian.

In his welcoming remarks, Very Rev. Fr. Muron Aznikian spoke of the sacrifice of St. Vartan and his companions in protecting our homeland and our faith. About 1,500 years ago, the Armenian people united to reject the Persian monarch Hazgerd; however, continued Hayr Muron, there are still individuals like Hazgerd today who are trying to conquer our faith, thus urging the youth to remain firm and unyielding in their faith.

Subsequently, students from each Sunday School in turn offered recitations and songs in celebration of Vartanants.

In his closing remarks, the Prelate stated that gathering to commemorate Vartanants centuries after the fact exhibits the renewal of our faith and our determination to remain loyal to the vows of Sts. Vartan and Ghevont. The Prelate then commended the students for their ability to truly grasp and convey the meaning of Vartanants. In speaking of our individual responsibilities, the Prelate explained to the students that it is our obligation to willingly take on and successfully carry out our responsibilities, and gave the example of clergy, educators, and individuals in our Prelacy who undertake and complete their duties, specifically naming Hayr Muron and Hayr Barthev for all their hard work

The Sunday School Directorate in turn expressed its gratitude and thanks to the Rev. Fathers and to Sunday School Directors Hagop Tchaghasspanian, Vartan Kebabjian, Raffi Torossian, Seta Kechejian, and Taline Zomjian, whom the Prelate presented with mementos.

The program concluded with the Sunday School anthem.